Բ. Հ. ԱՆԱՆԻԿՅԱՆ, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974, 408 էջ։

Դրախոսվող մենագրությունը նվիրված է դաշնակցության գաղափարախոսության ու քաղաքականության համակողմանի մերկացմանը։ Աշխատության առաջաբանում ճիշտ և տեղին ընդգծված է, որ ժամանակի առաջադեմ մտածողները և առաջին հերթին մարքսիստները (Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Ալ. Մյասնիկյան, Ս. Կասյան և շատ ուրիշներ) անհաշտ պայքար են ծավալել դաշնակցության ռեակցիոն գաղափարախոսության և կորստաբեր գործելակերպի դեմ.

Դաշնակցության բուրժուա-ազգայնական գաղափարախոսության մերկացումը, ինչպես ճիշտ նկատում է Բ. Անանիկյանը, բացի տեսականից ունի նաև պրակտիկ նշանակություն թե՛ ժողովուրդների բարեկամության ամրապնդման և թե՛ հատկապես երիտասարդության կոմունիստական դաստիարակության համար։

«Դաշնակցության դասակարգային էության հարցի շուրջը» գլխում հարուստ փաստական նյութերի հիման վրա ցույց է տրվում, որ դաշնակցության դասակարգային էության բացահայտումը կարևոր է և այն պատճառով, որ բուրժուական կուսակցությունների նման դաշնակցությունը ևս ռեկլամային նպատակով անուններ է փոխ առնում, ծրագրեր դրում՝ մասսաներին մոլորեցնելու և նրանց իր նպատակների իրականացման գործիք դարձնելու համար։ Սակայն բուրժուական կուսակցությունները ինչքան էլ կեղծեն ու փորձեն թաքցնել իրենց դասակարգային էությունը, այնուամենայնիվ այն անմիջապես դրսևորվում է նրանց կոնկրետ գործերի և գործելակերպի մեջ։ Վ. Ի. Լենինը գիտականորեն հիմնավորեց, որ քաղաքական կուսակցությունների դասակարգային էությունը, նրանց պայքարն ըմբռնելու հիմնական չափանիշը նրանց գործունեությունն է. «չպետք է հավատալ խոսքերին,— սովորեցնում էր Վ. Ի. Լենինը,— այլ ուսումնասիրել կուսակցությունների իսկական պատմությունը, ուսումնասիրել ոչ այնքան այն, ինչ որ ասում են կուսակցություններն իրենց մասին, այլ այն, ինչ անում են նրանք, ինչպես են վարվում նրանք զանազան քաղաքական հարցեր լուծելիս, ինչպես են վարվում նրանք այն գործերում, որոնք շոշափում են հասարակության զանազան դասակարգերի՝ կալվածատերերի, կապիտալիստների, գյուղացիների, բանվորների կենսական շահերը և այլն»[1]։ «Խոսքին,—շեշտել է Վ. Ի. Լենինը,— հավատում են միայն տխմարները»[2], «...մի հավատացեք խոսքերին,— գրել է Վ. Ի. Լենինը,— ստուգեցեք դրանք փաստերով»[3]։ Լենինյան այս դրույթով էլ աշխատությունում տրված է դաշնակցության դասակարգային էությունը։

Դեռևս 1906 թ. Ստ. Շահումյանն անդրադառնալով դաշնակցության ծրագրին, նշել է, որ այն ձևի համար արտագրված է նարոդնիկական ծրագրից, բայց ոչ մի առնչություն չունի այն շարժման հետ, որի ղեկը փորձում է իր ձեռքը վերցնել դաշնակցությունը։

Հեղինակը դաշնակցության դասակարգային էությունը ճիշտ լուսաբանելու համար անդրադառնում է նրա սոցիալական կազմի և բուն էության միջև եղած հակասություններին ու եզրակացնում, որ որոշակի շրջաժան գիծ կար դաշնակցության շարքային մասսայի, որը մեծապես մանրբուրժուական էր, և նրա բյուրոկրատիայի միջև, որը միշտ կապված է եղել բուրժուազիայի հետ և հանդիսացել նրա շահերի պաշտպանը։ Այս շրջաժան գիծն էլ ելակետ դարձնելով՝ հեղինակը ճիշտ է բացատրում դաշնակցության դասակարգային էությունը, ցույց տալով, որ նրա սոցիալական կազմում մեծ տոկոս կազմող մանր բուրժուազիան չէ, որ մշակել է նրա գլխավոր գիծն ու քաղաքականությունը։ Միաժամանակ հեղինակը գտնում է, որ կուսակցության շարքային անդամների ներգործությունը ղեկավար օրգանների վրա չափազանց

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 38։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 445։

3 Նույն տեղում, էջ 448։

աննշան էր։ Վերջիններս, սակայն, չէին կարող ինչ-որ չափով հաշվի չառնել նաև այդ մասսայի պահանջները և անընդհատ մաներում էին ու նրանց շահերի պաշտպանության պատրանք ստեղծում, որովհետև նրանք էին իրենց նպատակների իրագործման հենարանը։ Հեղինակին հաջողվել է բազմաթիվ փաստերով հանգել այն ճիշտ եզրակացությանը, որ դաշնակցության տատանվողականությունը և անընդհատ գունափոխվելը բխում էին հայ բուրժուազիայի յուրահատուկ վիճակից։ Դաշնակցության ղեկավարության այդպիսի վարքագծի նպատակն է եղել ապակողմնորոշել մասսաներին, նրանցից թաքցնել կուսակցության բուրժուական էությունը։ Նա անընդմեջ մաներել է, միայն թե ինչ գնով էլ լինի կատարի իրեն սնող դասակարգի՝ բուրժուազիայի պատվերը։ Դաշնակցությունը երբեք չի շեղվել իր դասակարգային գծից։ Նա եղել և մնում է բուրժուական կուսակցություն և միշտ դաշնակցել է բուրժուական կուսակցությունների հետ, ցարիզմի հետ, իմպերիալիստական տերությունների հետ և անհաշտ պայքար է մղել առաջադիմական ուժերի և սոցիալիզմի դեմ։

Գրքում համոզիչ կերպով ցույց է տրված, որ դաշնակցական դաղափարախոսությունը հիմնականում ժխտելով դասակարգերի առկայությունն ու անխուսափելի դասակարգային պայքարը հայ իրականության մեջ, այսպես կոչված «ազգային միասնություն» քարոզելով հանդերձ միշտ էլ հետևողական դասակարգային պայքար է մղել հասարակության առաջադեմ ուժերի, պրոլետարական-հեղափոխական շարժումների և բոլշևիզմի դեմ։ Կատարելով բուրժուազիայի դասակարգային պատվերները, գրում է հեղինակը, առաջին պլան մղելով «համահայկական» խնդիրները, նա դաշինքի մեջ էր մտնում ռեակցիոն ուժերի հետ, հայ ժողովրդին և նրա շարժումները փորձելով մեկուսացնել ընդհանուր հեղափոխական շարժումներից։ Դաշնակցությունը հանդիսացավ Սովետական Ռուսաստանի երդվյալ թշնամին, սոցիալիստական հեղափոխության մեջ տեսնելով իր գոյության ժխտումը։

Դաշնակցությունը երբեք չի տատանվել սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև, միշտ մնալով վերջինիս բանակում։ Սփյուռքում իր կեսդարյա գոյության ընթացքում նա ծառայել է բոլոր ռեակցիոն ուժերին, այդ թվում նաև գերմանական ֆաշիզմին։ «Դաշնակցությունը,— գրում է հեղինակը,— հայ բուրժուազիայի հարազատ զավակն էր և իր էվոլյուցիայով հասավ մինչև միջազգային իմպերիալիզմի ագենտի աստիճանի» (էջ 93)։

Դաշնակցության դաղափարախոսությունը գնահատելիս հեղինակը հիմք է ընդունել Վ. Ի. Լենինի այն նշանավոր դրույթը, թե իմպերիալիզմի դարաշրջանում գոյություն ունի միայն երկու դաղափարախոսություն՝ բուրժուական և սոցիալիստական։

Դաշնակցության դաղափարախոսությունն էկլեկտիկ ուսմունք է և ունի մի շարք ընդգծված կողմեր, որոնց վրա էլ կանգ առնելով՝ հեղինակը հարուստ փաստերի հիման վրա ցույց է տվել, որ դրանք ունեցել են միայն մի նպատակ՝ պաշտպանել հայ բուրժուազիայի շահերը, ամեն կերպ դրանք վերագրելով ամբողջ ազգին։ Հեղինակը անհերքելի փաստերով ցույց է տվել, որ դաշնակցության դաղափարախոս Մ. Վարանդյանը և նրա հետևորդները, ատելությամբ լցված մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ, փորձ անդամ չեն արել թեկուզ մակերեսորեն ծանոթանալու նրա հետ և գիտական սոցիալիզմի մասին ոչ մի հասկացություն չեն ունեցել։

Բ. Անանիկյանը մերկացնող փաստերով կարողացել է հիմնավորել, որ սոցիալիզմը դաշնակցության համար միայն ֆրազ ու քող է եղել։ Եվ պատահական չէ, որ իրեն «սոցիալիստական» հորջորջող դաշնակցությունը երբեք չիմացավ, թե ինչ է գիտական սոցիալիզմը։

Մարքսիզմի նկատմամբ դաշնակցության երդվյալ թշնամանքը գրքում բացատրվում է նրանով, որ ինչպես ամեն մի բուրժուական կուսակցություն, այնպես էլ դաշնակցությունը մարքսիզմի դաղափարների և նրանց հաղթանակի մեջ տեսնում էր իր և իրեն սնող դասակարգի լիակատար բացառումը։ Նա հատկապես ոչ մի կերպ չէր ուզում հաշտվել մարքսիզմի այն անկյունաքարային դրույթի հետ, որ ամենահեղափոխական դասակարգը պրոլետարիատն է։

Հեղինակը ընդգծում է, որ դաշնակցական «տեսաբանները», որպես բուրժուական կուսակցության դաղափարախոսներ, ոչ միայն ժխտում են ընդհանրապես սոցիալիստական հեղափոխության պատմական անհրաժեշտությունը, այլև բացահայտ անտեսում, գիտակցաբար շրջանցում են հեղափոխության օբյեկտիվ նախադրյալների հարցը։ Դա բացատրվում է նրանով, որ այդ հարցի գիտական հետազոտությունը նրանց կհասցներ գոյություն ունեցող հասարակարգի բացասման անհրաժեշտության ընդունմանը։

Բ. Անանիկյանին լիովին հաջողվել է սպառիչ մերկացնել դաշնակցության դաղափարախոսության հակագիտական դիրքորոշումը պրոլետարիատի դիկտատուրայի, բանվոր դասակարգի հեգեմոն դերի և գյուղացիության հետ նրա դաշինքի գնահատման հարցերում, բացա-

հայաբ բուրժուական գաղափարախոսության զինանոցից դաշնակցության փոխ առած այն դրպարտությունների բուն իմաստը, թե, իբր, կոմունիստները, մարքսիստները ուզում են վերացնել հայրենիքը, ազգությունը։

Դաշնակցության գաղափարախոսները, ինչպես ճիշտ նկատում է գրախոսվող աշխատության հեղինակը, չէին ուզում հասկանալ, որ գիտականորեն հիմնավորելով պրոլետարիատի միջազգային համերաշխության դաղափարը, մարքսիզմի կլասիկները միաժամանակ որոշակիորեն ընդգծել են, որ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ պարտականությունները երբեք էլ չեն հակասում նրա ազգային խնդիրներին։ Վ. Ի. Լենինը զարգացնելով ազգայինի ու ինտերնացիոնալիստականի միասնության մարքսիստական տեսակետը, միաժամանակ ընդգծում էր ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը։ Ավելին, նա ազգային հարցը համարում էր դասակարգային պայքարի և սոցիալիստական հեղափոխության կարևոր հարցերից մեկը։

Հեղինակը գիալեկտիկորեն մոտենալով ազգայնականության գնահատման հարցին և հիմք ունենալով մարքսիզմի հիմնաքարային դրույթները, միանգամայն իրավացիորեն ցույց է տալիս, որ ազգայնականությունը բուրժուազիայի դասակարգային գաղափարախոսությունն է։ Միանգամայն իրավացիորեն նա ընդգծում է, որ դաշնակցության գաղափարախոսությունը բուրժուա-ազգայնական է։ «Ազգատյաց նացիոնալիզմը,— գրում է հեղինակը,— որ գալիս է դաշնակցության կազմավորման ժամանակաշրջանից, իր արտացոլումն է գտել նրա բոլոր գաղափարախոսների գործերում, բոլոր ժամանակներում» (էջ 181)։ Բ. Անանիկյանին հաջողվել է բազմաթիվ ու բազմապիսի փաստերով ցույց տալ և հիմնավորել, որ այդ ռեակցիոն ազգայնականությունն իր ամբողջ ուժով դրսևորվել է հատկապես մեր ժողովրդի համար բախտորոշ պահերին։

Բնութագրելով դաշնակցության ազգայնականությունը, հեղինակը բազմապիսի փաստերի հիման վրա եզրակացրել է, որ այն իր սուր ծայրով առաջին հերթին ուղղված էր մյուս ժողովուրդների աշխատավորական խավերի դեմ։ Այս հարցում հեգինակը հանգում է այն ճիշտ հետևությանը, որ դաշնակցության գաղափարախոսները, կանգնած լինելով իդեալիզմի հողի վրա, չեն կարողացել տեսնել հասարակության զարգացման ազդակները։

Բ. Անանիկյանը միանգամայն ճիշտ է նկատում, որ դաշնակցությունը ազգային հարցը գիտել և դիտում է ծուռ հայելու մեջ, իսկ պրակտիկայում ամբողջովին գտնվում է վոլյունտարիզմի գերության մեջ։ Հեղինակը ցույց է տալիս, որ տառացիորեն ոչ մի տարբերություն չկա դաշնակցության գաղափարախոսության և հակակոմունիզմի ցանկացած գաղափարախոսի հայացքների միջև։ Լիակատար համոզմունքով պետք է ասել, գրում է հեղինակը, որ ոչ միայն էության իմաստով, այլև մանրուքներում այդ գաղափարախոսությունների միջև որևէ տարբերություն չկա։

Աշխատության հեղինակը կարողացել է ցույց տալ, որ դաշնակցության գաղափարախոսները միշտ էլ կանգնած են եղել պատմության մեջ անհատի և հասարակության դերի գնահատման հակագիտական դիրքերում։ Նրանք ժխտել են ժողովրդական մասսաների վճռական գերը պատմության մեջ և հետևողականորեն փորձել են այդ տեսակետը տարածել հայ իրականության նկատմամբ։ Նրանք երբեք չեն հավատացել հայ ժողովրդի ստեղծագործ ուժին ու բանականությանը, նրա մեջ տեսել են միայն բնազդներով շարժվող զանգված և այն օգտագործել իբրև իրենց նպատակների կենսագործման միջոց։ Դաշնակցության գաղափարախոսները, ժխտելով մասսաների վճռական դերը պատմության մեջ, հավատարիմ սուբյեկտիվ իդեալիզմին՝ հայ ժողովրդին դիտել են իբրև պասսիվ մի ամբոխ և միակողմանիորեն բարձրացրել անհատի դերը։

Մեծ Հոկտեմբերը ռուսական կայսրության ճնշված ու հարստահարված բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի սրտում ապրելու ու հաբատևելու կրակ վառեց։ Անդրկովկասի աշխատավորները, բոլշևիկների գլխավորությամբ, առաջիններից էին, որ արձագանքեցին սոցիալիստական մեծ հեղափոխությանը. սակայն քնած չէին նաև հակահեղափոխական ուժերը, որոնք իրենց իմպերիալիստ տերերի թելադրանքով, դավաճանելով սեփական ժողովուրդներին, ոչ միայն Անդրկովկասը անջատեցին սովետական Ռուսաստանից և թշնամական դիրք բռնեցին նրա նկատմամբ, այլև դարերով բարեկամ անդրկովկասյան ժողովուրդների միջև աննախադեպ թշնամանք սերմանեցին։ Նույն այդ տերերի թելադրանքով ու ստեղծված իրադրության ճնշմամբ 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հայտարարվեց «անկախ», իսկ դաշնակցությունը դարձավ կառավարող կուսակցություն։ Դաշնակցության հենց այդ տարինե-

րի գործունեությանն է նվիրված աշխատության IV գլուխը։ Փաստական նյութի խոր վերլուծությամբ հեղինակը ցույց է տվել, որ իր տիրապետության ամբողջ շրջանում դաշնակցությունն ի վիճակի չեղավ լուծելու սոցիալ-տնտեսական որևէ խնդիր, որովհետև, ինչպես նկատել է Ալ. Մյասնիկյանը, նրա տնտեսական քաղաքականության սկզբունքը կողոպուտն ու հափշտակվածի խժռումն էր։ Դաշնակցության տիրապետության տարիներին, իրավացիորեն նշում է հեղինակը, մի կողմում հարյուր-հաղարավոր դիակներ էին, մյուս կողմում՝ կողոպուտ, կաշառակերություն, գողություն ու շահադիտություն։ Այս էր դաշնակցության «անկախ» հանրապետության իրական պատկերը։

Երկրի քաղաքական իրավիճակը խիստ որոշակի էր. մի կողմում Թշնամական Թուրքիան էր իր ադրեսիվ, հայաջինջ ծրագրերով, իսկ մյուս կողմում՝ դարերով կողք-կողքի ապրած բարեկամ ժողովուրդները, որոնց ազգայնական կուսակցությունների հետ դաշնակցությունը հաշտ էր միայն Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու հարցում։ Հայ ժողովրդի համար օրհասական պայմաններում դաշնակցականները հույսերը կապեցին իմպերիալիստների հետ։ Սրանով դաշնակ պարագլուխների հակահեղափոխական քաղաքականությունը չսահմանափակվեց։ Տերերի թելադրանքով նրանք սերտ կապերի մեջ մտան Դենիկինի հետ։ Բ. Անանիկյանը բազմաթիվ փաստերով լիովին հիմնավորում է, որ դաշնակցության արտաքին քաղաքականությունը եղել է Անտանտի առաջ կույր լակեյությունը, ամենասանձարձակ ու վայրագ ավանտյուրիզմը հարևան ժողովուրդների և ատելությունը Սովետական Ռուսաստանի նկատմամբ։

Աշխատության հեղինակին հաջողվել է փաստերով հիմնավորել, որ դաշնակցությունն այն կուսակցությունը չէր, որ հաշվի առներ ստեղծված օբյեկտիվ իրավիճակը, հայ ժողովրդի տրամադրություններն ու ցանկությունները, զգար պատմության առաջընթացը, ընդուներ իր սանկությունը և գիմեր խոհեմ միջոցների։ Նա, ընդհակառակը, խեղդեց փառապանծ Մայիսյան ապստամբությունն ու առաջին պլան մղեց տեռորի պրակտիկան։ Սակայն այդ ճիգերն անկարող եղան կասեցնել հեղափոխության ալիքը, որը 1920 թ. նոյեմբերի 29-ին տապալեց դաշնակցության տխրահռչակ տիրապետությունը։

Գրախոսվող աշխատության մեջ ճիշտ է մեկնաբանված պատմական այն իրողությունը, որ տապալված դաշնակցությունը չհաշտվեց Հայաստանում հաստատված սովետական կարգերի հետ և նորից սկսեց մանևրել, խարդախել, բայց ուշ էր. բազմաչարչար հայ ժողովուրդը Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ ձեռնամուխ էր եղել Հայաստանում սոցիալիզմի հիմքերի կառուցման գործին։

Աշխատության արժանիքներից է նաև այն, որ նրանում հիմնովին մերկացված է երկրից ճողոպրած դաշնակցական բյուրոկրատիայի՝ կապիտալիստական ամենառեակցիոն ուժերին ստրկամտորեն ծառայելը։ Դաշնակցությունը ծառայագրվեց իմպերիալիզմի հակասովետական գործունեությանը։ Նա այժմ իմպերիալիզմի համար ոչ միայն ձայնափողի դեր է կատարում, այլև կատարում նրա բոլոր առաջադրանքները, «սակայն,— ինչպես իրավացիորեն գրում է հեղինակը,— ժամանակները փոխվել են և ոչ միայն դաշնակցության ավանտյուրիզմը, այլև միջազգային իմպերիալիզմի ողջ քայքայիչ գործունեությունը անզոր են փոխելու իրերի երկաթյա տրամաբանությունը, ետ շրջելու պատմության անիվը» (էջ 244)։

Բ. Անանիկյանին ըստ ամենայնի հաջողվել է աշխատության վերջին՝ «Իմպերիալիզմի գաղափարական ծառայության մեջ» գլխում ցույց տալ, որ դաշնակցությունն ամեն ճիգ գործադրում է սեպ խրելու ոչ միայն հայ և ռուս ժողովուրդների, այլև հայ և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական բարեկամության մեջ։ Եվ եթե նույնիսկ բուրժուական պաշտոնական գաղափարախոսությունը ստիպված է երբեմն-երբեմն ընդունել և հաշվի առնել ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ուժը, ապա դաշնակցությունը բացեիբաց, առանց որևէ հիմքի հայտարարում է, թե այդ ժողովուրդների միջև իրական բարեկամության մասին խոսք լինել չի կարող։

Դաշնակցությունը չի կարող տանել ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումներից բխող այն հետևությունը, որ մեզ մոտ հաստատվել և ռեալ իրականություն է դարձել մարդկանց պատմական նոր ընդհանրությունը՝ սովետական ժողովուրդը։ Դաշնակցականներին ըստ երևույթին անհասանելի է պատմական այն իրողությունը, որ «Ազգային հարցը, այն տեսքով, ինչպես նա մեզ հասավ անցյալից, լուծված է լիակատար կերպով, լուծված է վերջնականապես և անդառնալիորեն»[4]։

---

4 Լ. Ի. Բրեժնև, ՍՍՀՄ 50-ամյակի մասին, Երևան, 1973, էջ 16։

Սակայն ամենայն դրվատանքի արժանի այս աշխատությունը ավելի կշահեր, եթե չլիներին որոշ թերություններ։ Այն մասնավորապես կշահեր, եթե տրվեր աղբյուրների ավելի մանրակրկիտ ու բազմակողմանի տեսություն։ Դաշնակցության գաղափարախոսության և գործելակերպի առանձին կողմերի մասին ժամանակին լույս են տեսել մի շարք աշխատություններ։ Շահեկան կլիներ, որ հեղինակը քններ և արժեքավորեր դրանք։ Ցանկալի կլիներ, որ աշխատության մեջ բարձրացված հարցերը քննվեին դաշնակցության և ժամանակի մյուս հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ընդհանուր ֆոնի վրա։ Դա ավելի կնպաստեր այս կամ այն հարցում դաշնակցության վարած հակաժողովրդական քաղաքականության մերկացմանը։

Նշված գիտողությունները ամենևին չեն նսեմացնում գրախոսվող աշխատության գիտաքաղաքական նշանակությունը։ Այնտեղ փաստական հարուստ և անվիճելի տվյալների լայն օգտագործմամբ, մարքսիստական մեթոդոլոգիայով ըստ ամենայնի քննարկված և գիտականորեն մերկացված են դաշնակցական կուսակցության գաղափարախոսությունը, քաղաքականությունն ու ժողովրդակործան գործունեությունը, տրված է նրա կրախը։ Բ. Անանիկյանի մենագրությունը պրոբլեմների ընդգրկմամբ, դրանց համակողմանի լուսաբանմամբ, իր արդիական ու քաղաքական նշանակությամբ լուրջ ներդրում է սովետահայ պատմա-փիլիսոփայական գրականության մեջ։

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր